ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 378-Ա/2 **«14» մարտի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի 17-րդ և 19-րդ կետի 20-րդ ենթակետերի, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակիցների քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերով ուսուցման գործընթացը կանոնակարգելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում (այսուհետ նախարարություն) ստեղծել քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերով ուսուցման ուսումնական խմբեր՝ հետևյալ կազմերով.

1) 1-ին ուսումնական խումբ՝

ա. ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար,

բ. ղեկավարի օգնական՝ նախարարության գլխավոր քարտուղար,

գ. անդամներ՝

գ.1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալներ,

գ.2. նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ,

գ.3. նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ,

գ.4.նախարարության զորահավաքային նախապատրաստության բաժնի աշխատակիցներ,

գ.5. նախարարության քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ղեկավարներ:

2) 2-րդ ուսումնական խումբ՝

ա. ղեկավար՝ նախարարության զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ,

բ. ղեկավարի օգնական՝ նախարարության փրկարարական խմբի պետ,

գ.անդամներ՝ նախարարության քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմ

3) 3-րդ ուսումնական խումբ՝

ա. ղեկավար՝ նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ,

բ. ղեկավարի օգնական՝ նախարարության սպորտի քաղաքականության վարչության պետ,

գ. անդամներ՝ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներում չընդգրկված աշխատակիցներ:

2. Խմբերի ղեկավարներին՝ ուսումնական գործընթացը կազմակերպել համաձայն նախարարության «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2024 թվականի հիմնական միջոցառումների պլանի»:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**